


ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԲԱՂԱԴՐԻՉ Բ – ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ և ՋԱՐԳԱՑՈՒՄ



Երկիր

Պատվիրատու

Համագործակցող

Ժամկետ

Հայաստանի Հանրապետություն

Ասիական Ջարգացման Բանկ,
Հայջրմուղկոյուղի ՓԲԸ

“Հայգյուղշիննախագիծ” ՍՊԸ

Ապրիլ 2008թ. – Դեկտեմբեր 2009թ.

Շրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիր

Իրականացվող ընդհանուր առաջադրանքներն էին.

(i) ՀայՋԿ անձնակազմի համար ուսուցում տեխնիկական և ֆինանսական կառավարման ոլորտում, այդ թվում շինարարության վերահսկողության, ակտիվների կառավարման խմբի ուսուցում և հաշվապահական անձնակազմի ուսուցում;

(ii) ֆինանսական, կոմերցիոն և տեխնիկական կառավարման համակարգերի բարելավում հետևյալի միջոցով. Կառավարման տեղեկատվական համակարգերի հայեցակարգի և դրա իրականացման քայլերի մշակում; ակտիվների կառավարման հայեցակարգի մշակում; կոմերցիոն քաղաքականության մշակում; գոյություն ունեցող հաշվապահական համակարգի գնահատում և զարգացման ռազմավարության մշակում; նոր հաշվապահական ծրագրային ապահովման որոշում; հաշիվների գոյություն ունեցող ծրագրային ապահովման գնահատում և արդյունավետ հաշվետվությունների համակարգի առաջարկում; տեղեկությունների համակարգված հոսքի ստացման մեխանիզմների բարելավում տարբեր բաժինների միջև; ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի համար տվյալների մոդելների հայեցակարգի և ՏԱ հիմունքների մշակում:

(iii) Հասարակության իրազեկության բարձրացում և հասարակական լսումների անցկացում երեք փուլերի վերաբերյալ (նախնական, աշխատանքային նախագծերի և շինարարության փուլեր), ԱԶԲ ծրագրի բաղադրիչ Ա-ում ընդգրկված ենթածրագրերի բնակավայրերում: Ջրի որակի մոնիտորինգի պլանի մշակում:

(iv) Ուսումնասիրել ՀԶԿ գոյություն ունեցող կազմակերպչական կառուցվածքը՝ գործառնական և արդյունավետության առումով և առաջարկել բարելավման հանձնարարականներ:



Շրագրի նպատակը

Բարելավել ծրագրում ընդգրկված բնակավայրերի ջրամատակարարումը՝ ապահովելով բաժանորդների կողմից սպառվող ջրի որակական ցուցանիշները, սպառված ջրի հաշվառումը, ջրամատակարարման տևողության ավելացումը, բաշխիչ ցանցի հիդրավլիկական արդյունավետ ռեժիմները, կրճատելով բաշխիչ ցանցում առկա հոսակորուստների մակարդակը: